18.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 17-ի N 2079 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգը կարգավորում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ պետական կազմակերպություն) գործունեության ընթացքում առաջացած շահույթի օգտագործման հետ կապված հարաբերությունները:

2. Պետական կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար:

3. Պետական կազմակերպության հաշվետու տարվա շահույթը բաշխվում է հետևյալ ուղղություններով և չափերով՝

1) **պահուստային ֆոնդ՝** հաշվետու տարվա շահույթի 10 տոկոսի չափով (ռիսկեր և անորոշություններ՝ ներկա արժեքի և ապագայի դեպքեր, անբարենպաստ պայմանագրեր, ֆորսմաժորային այլ իրավիճակներ).

2) **կարողությունների զարգացման ֆոնդ** (ներդրումներ կատարելու, նոր տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման և ներդրման, ավտոմատացման, սարքավորումների նորոգման և այլ նմանատիպ նպատակով)՝ հաշվետու տարվա շահույթի 50 տոկոսի չափով.

3) **սպառման ֆոնդ՝** հաշվետու տարվա շահույթի 40 տոկոսի չափով, որը ներառում է՝

ա. աշխատողների նյութական խրախուսման ֆոնդը (որակյալ և բարեխիղճ աշխատանքի համար),

բ. դրամական օգնության ֆոնդը (աշխատողների երկարատև հիվանդության, մահվան, աշխատողների հարազատների մահվան, ինչպես նաև ամուսնության և այլ սոցիալական խնդիրների առկայության դեպքում),

գ. այլ (կանոնադրական խնդիրների իրականացման համար նախատեսված այլ նպատակների, կանոնադրությամբ նախատեսված նպատակներից բխող որոշակի մասնագետների կամ որակավորում ունեցող անձանց հետ աշխատանքային կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի հիման վրա գործառույթների և ծառայությունների մատուցման համար):

4. Անհրաժեշտությունից ելնելով, լիազոր մարմնի համաձայնությամբ, պահուստային ֆոնդում կուտակված գումարը կարող է ուղղորդվել կարողությունների զարգացման և (կամ) սպառման ֆոնդերին:

5. Հաշվետու տարվա ընթացքում պահուստային, կարողությունների զարգացման և սպառման ֆոնդերի չծախսված միջոցները ծախսվում են հաջորդ հերթական տարում՝ պահպանելով իրենց նախնական նպատակայնությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ